

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ 5 Օգոստոս 1994, Ս. Էջմիածնայ Տաճարին մէջ, Ամենապատիւ Պատրիարք Հօր ձեռամբ, երեք Սարկաւագներ (Արթօ Սրկ. Գարանեան, Պօղոս Սրկ. Պոկտան եւ Սարգիս Սրկ. Սարիբեկեան) ձեռնադրութեան քահանայ:

Խարտաւիլակն էր Գեորգ. Ս. Սեւան Եպս. Ղարիպեան, առընթերականերն էին Հոգշ. Ս. Բագրատ Արդ. Պուրմէքեան եւ Հոգշ. Ս. Գուսան Վրդ. Ալմանեան: Ընծայեալները ծնրագնաց յառաջացան Էջմիածնի եկեղեցիի մուտքէն մինչեւ դասը, ուր արարողութեան աւարտին, արտասանեցին մեր եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան հանգանակը: Շաբաթ, 6 Օգոստոս 1994ին, Ձեռնադրութեան Խորհուրդը կատարուեցաւ տպաւորիչ հանդիսաւորութեամբ: Օրուան տօնն էր Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Ժամարարն էր Հոգշ. Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան: Ընծայեալները, ի նշան աշխարհի հրաժարման, ձեռնաքարձ ժողովուրդին

դառնալէ ետք, ձեռնադրութեան երկրորդ քաժինն մէջ ընդունեցին քահանայական զգեստաւորման օրհնութիւնը, տրւութեան ուրոյն աղօթքներով:

Օծման խորհրդաւոր ու նուիրական պահուն, Ձեռնադրիչ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, բարեշնորհ Արթօ Սարկաւագ Գարանեանին անուանեց «Տէր Դանիէլ». բարեշնորհ Պօղոս Սարկաւագ Պոկտանին անուանեց «Տէր Եգրաս», եւ բարեշնորհ Սարգիս Սրկ. Սարիբեկեանին անուանեց «Տէր Զաքարիա»:

Ամեն. Պատրիարք Սրբազանը խօսեցաւ բովանդակալից քարոզ մը: Ապա ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն մատուցանելու Ս. Պատարագ, իրենց անդրանիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին, եւ «Ողջոյնի» պահուն բովանդակ Միաբանութիւնը բեմ քարձրանալով ողջագոյրութեամբ, համբուրելով անոնց նորածն մակատն ու աջը: Նոյնը ըրին դպիրներ եւ ժողովուրդ Պատարագի աւարտին, եկեղեցիին դասին մէջ:

ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՄԷՆ

Այսու ուրախութեամբ կը յայտնենք թէ Աւստրալիոյ եկեղեցիներու Խորհուրդը, իր ընդհանուր ժողովը աւարտեց Գշ. 5 Յուլիս 1994ին: Ժողովը տեղի ունեցաւ Աւստրալիոյ Մայրաքաղաք Գանպերայի մէջ, 1-5 Յուլիս 1994ին:

Միջ-եկեղեցական այս ժողովին Աւստրալիոյ Թեմի պատուիրակութիւնը գլխաւորեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ, Գեորգ. Ս. Աղան Ս. Արքեպս. Պալիօգեան. պատուիրակութեան մաս կազմեցին Տիար Աւօ

Վարդանեան, Տիկ. Զարդիկ Վարդանեան եւ Օր. Իգապէլ Սմարեան: Անիւ-ը վերանուանուեցաւ Աւստրալիոյ մէջ եկեղեցիներու Ազգային Խորհուրդ:

Աւստրալիոյ Հռովմէական Կաթոլիկ եկեղեցին յիշեալ Խորհուրդի նոր անդամ դարձաւ:

Ժողովի աւարտին, խորհուրդը Ս. Աղան Ս. Արքեպս. Պալիօգեանը, միաձայնութեամբ Նախագահ ընտրեց երեք տարիներու համար:

5 Յուլիս 1994 Աւստրալիա

ԳԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.--ի